

Վշտացաւ բաղնատանը իբր Անթն ընարուծեան ,  
 Զի բնութիւնս համախուռն էլ նրմա ախոյեան .  
 Հուր և օդ դաշնակից , ծոփն ահեղ և ցամաք ,  
 Տան ճակատ դիւցազնիս գոռ յուզեալ գրժընդակ :  
 Վիշտ բազում 'ի գետոց յորդահոս 'ի ծրփման ,  
 Մրցեցաւ ընդ յազմ ջուրս 'ի յոգիս ապաստան :  
 Վիշտ բազում և յալեաց ամեհեաց Պոնտոսին ,  
 Զոր փրլոյզ Պոսիդոն եռարձէն 'ի ձեռին :  
 Փորձեցաւ համբերողն յարուծեան 'ի հանդէս ,  
 Կրուռեցաւ աննրկուն իբր արին Ոգիւսէս :  
 Վիշտ քաղում և յաղցից 'ի մարմնոցս ախոյեան :  
 Տանջեցաւ , ժուժկալեացայրն Հոգւով ծայրալիւր :  
 Վիշտ անչափ և 'ի սուտ առ յեղբարց 'ի յաղբին ,  
 Եւ ժուժայր և ներքէր նահատակն Յիսուսին : . . .  
 Ակն ապա 'ի փորձեալն յառեցաւ Տէրունեան .  
 Առ ըզնա և ջքքնալ եդ գործի շնչական :  
 Ո՛վ , գործի փորձ գրտաւ 'ի ձեռին Աստուծոյ ,  
 Եւ սովաւ գործք ցուցան հրաշակերտք և արդոյ :  
 Ո՞ր ըզքոյ , տոն հայկայ , եդ խաղաղ ըզտահմանս ,  
 Եւ պարարտ ցորենով լից ըզքո անգաստանս :  
 Ո՞ր ըզնիգս քոց դրանդեաց հաստամուր զորացոյց ,  
 Եւ զորդիս քո 'ի քեզ առ Աստուած մերձեցոյց :  
 Ի մրտից մինչև յեւրո զիւր ըզքան առաքեաց ,  
 Եւ պատգամքն ընթացեցէ ձայն ետուն աւետեաց :  
 Ո՞ր ըզքեզ որպէս զար որպէս ձիւն ըսպիտակ  
 Յորդարեալ , և արեաց 'ի ժամգոյդ գրժընդակ :  
 Ընչեցին հոգով սորա 'ի դաշտ քոց արօտից ,  
 Եւ գնացին խաղացին ջուրք յորդեալք իմաստից :  
 Սա փոխան կորուսեալ քո դրախտին փափկութե  
 'նոր դարաստ քեզ 'ի մուտս զայս անկեաց Մե  
 նարան : . . .

Զայս այսպէս արտաբոյ արուե ստեղ այս ճարտար ,  
 Եդ ապա հրաշակերտ և զնեքքինն իւր տաճար .  
 Ի զէն զարդ 'ի Հոգւոյն վառեցաւ տալ ճակատ  
 Ընդ հրէշից ճիւղաղաց 'ի հանդէս մենամարտ : . . .  
 Կեանք խոնարհ դիւցապինս խէթ Էական հրպարտին ,  
 Բըլլակնեաց զանթընկէց բիրս աչաց գազանին :  
 Սա կոխեաց զբարձրայոն պերճուծի աշխարհի ,  
 Զորձ փառաց արկ զանձամբ զգրձձուծի Յնի : . . .  
 Նա այսպէս 'ի հանդէս բազմաղբի փորձուծեան  
 Մուտ և էլ քաջաղէն ախոյեան յաղթական :  
 Խակ կրօնից սրբութե յինքն առեալ տոհմականս ,  
 Զերկնաւոր ըզվարուց մեզ եթող ըզսերմանս :  
 Որպէս մեծ անգաստան արմրտեօք ակաղձուն ,  
 Ընդ միոյ երեսուն , ընդ միոյ ետ վաթսուն ,  
 Բարէ , նա էլ 'ի ծայրն . ընդ միոյ և հարիւր ,  
 Եւ զամբարն լից զերկնից 'ի հատից բազմաբուր :  
 Նա զհաւատ իւր պահեաց , և զընթացս կատարեաց ,  
 Եւ պրտակ զանթառամն առ 'ի գլուխ և կապեաց :  
 Կայ յերկնից և 'ի մեզ անքրթիթ ակնարկէ .  
 Եւ հրաւեր 'ի բարձունս հեշտալուր ձայն աղղէ .  
 « Մի , որդեակք , մի կարծեք , թէ խընդամ անվը  
 թար

« Մինչև զձեզ իմ առեալ աստ Սրբոցն 'ի կաճառ :  
 « Թէ շաւիղ ըզսրբոց դուք կոխեք 'ի յերկրի ,  
 « Վերձեմեալ նազեւսիք և յերկնից տաճարի :  
 « Օրինակ ձեզ ետու նրժդեհեալս յաշխարհի ,  
 « Զիմ Գշտոյն ախրամին միշտ կալեալ հովանի :  
 « Թէ միայն կեանք խոնարհ ընդգրկեք , և ըզսեր ,  
 « Զեր երկնիք են յաւեժ , յուսացէք անվեհեր :  
 « Լըւայք դուք ապաքէն զտէրունեան զերանին .  
 « Լիք ալքատք դուք հոգւով . ձեր է թագն  
 երկնային :

« Թէ խնդրեք , զբոց սիրոյն 'ի խանդից ձեր հոգւոյ  
 « Բորբոքեւ բարդ 'ի բարդ մինչ յաթոռն Այ ,  
 « Դուք 'ի ձեր հաստուածոյ մինչ յատակն 'ի  
 ներքին  
 « Խոնարհեալք , և անդէն վերեջիք 'ի յերկին :  
 « Օրինակ ձեզ ետու և մարզից գիտուծեան .  
 « Մի , որդեակք , հուրն 'ի ձեզ մի շիջի աստուա  
 ծեան :  
 « Արծարծեալներթ փրքովք կայծակունս ըզքանի ,  
 « Ըզճըրագն իմաստից խուն նըշոյլ վառեցի .  
 « Դուք արդ գամ քան ըզգամ մեծաջան զամբարօք  
 « Ըզկայծակն յորդեցէք վառ յաւեժ և բորբօք :  
 « Այլ որպէս յիս տեսէք ձեզ ախպար գեղեցիկ ,  
 « Ի վարժից 'ի Հոգւոյն մի սուսամբ հովասիլք :  
 « Ժիրաժիր տուք ձեր զաջ 'ի յայգին տէրունի ,  
 « Մըշակեւ տոհմականս ըզՀոգւոյն արգանդի :  
 « Տուք ապա և զահեակ ձեր 'ի մարզս իմաստից ,  
 « Եւ զազգին վարժարանս գիք արդեամբք պաղա  
 լից : »

Արդ լըւայք դուք , Արդոյք , զձայրենին յորդորակ .  
 Մալթեսցուք առ 'ի գործ մեզ օձան երկնառաք :  
 Տեսանեմ կարկառեալ զաջ մերոյ նախահօր ,  
 Խանդակաթ տալ որդւոց զորավիգ մեծազօր :  
 Աղէ , քաջք , զայս ձիր Հօր քաջամուր զէն առեւ ,  
 Օն էլցուք 'ի հանդէս նահատակք քաջնափայլ :  
 Նահատակք 'ի կրօնիս կանոնաց պընդապահք :  
 Նիգ նեցուկ տաճարիս լեալ յաւեժ պահապանք :  
 Նահատակք երկնաշուք 'ի յընթացս հոգեւոր ,  
 Հեզ խոնարհ նախահօրս հեռեւեալք անխտոր :  
 Նահատակք և 'ի վարժս ըզմեամբք ելանեւ .  
 Ըտտ են վարժք իմաստից . քաւ , անտես մի առնեւ .  
 Ոմն իմաստ աստուածեան , ոմն 'ի վարժ 'ի բնա  
 կան ,

Կէսք յաշխոյժ Պարնասին , կէսք 'ի գիր հայկարան :  
 Մի և զայն մոռասիլք . նահատակք լիք յաղբին  
 Ազգասէր բարոյիւք մեր նրման գիւցազնի :  
 Զի գու , Հայր , որպէս երգն իմ երգեաց 'ի սկըզ  
 բան ,  
 Բերկրեցար ծընընդովք , բերկրեցիս և յապայն .  
 Բայց և ինձ գուծ արկցես 'ի խանդիցդ ով Հայր իմ ,  
 Զիր առատ տացես զԱջդ ինձ որդւոյ քոյ վերջին :



### Լըւայ :

## Լըւայ Զիս մէջ ինծի անանկ երեւ ցաւ որ իբր թէ գրքերս ժողվէր սըն

1 Անցեալ դարուն խաղաղի մատենագիրներուն  
 մէջ խիստ անուանի է Գասպար Կոճճի անունով  
 կոմսը : Իրեն գեղեցիկ խաղաքանուծիւնը , զուար  
 ձախօս ոճը , և ուզիղ բարոյականը ամէն ատեն սի  
 րելի բրած են խաղաղոց իր գրուածքները . և իր  
 շարագրած բարոյական պատմութիւններն ու քո  
 վէն ձևացուցած դիպուածները , խօսակցութիւն  
 ները , երազները , շատ խեղք կըսորվեցընեն կար  
 դացողին , ու առանց ձանձրացընելու կըկրթեն  
 զինքը : Հոս օրինակի համար գրածնիս իրեն երազ  
 ներէն մէկն է՝ Թարգմանած :

տուկի մը մէջ լեցուցեր եմ, ու նաւ  
մը նստած՝ կերթամ, բայց ուր գնա-  
ցածս ալ չեմ գիտեր: Աւաւակտն  
ու նաւավարները կրտսնէին որ ես  
մէկ վերացեալ մարդ մըն եմ. խեղճ  
միտքս կարդալու գրելու հետ է. ոչ  
իրենց պէս կուտեմ կրխմեմ, ոչ իրենց  
պէս յիշոցք ու հայհոյանք կրնեմ.  
ուստի զիս մարդու տեղ ալ չէին դը-  
նէր. ես ալ մէկ անկիւն մը քաշուած  
կծկրտած նստեր էի: Արբոր աս կեր-  
պով յաջող քամիով ճամբայ կը-  
նէինք, յանկարծ դիմացնիս ծովու  
աւազակներ ելան՝ չեմ գիտեր որ  
դիէն. կատաղաբար ելան նաւերնիս,  
ամէնքս բռնեցին, ձեռուրնիս ոտուը-  
նիս կապեցին, աւին տարին զմեզ ի-  
րենց նաւը: Ան նաւով չեմ գիտեր  
որչափ ատեն ճամբայ ըրինք, վերջա-  
պէս նաւահանգիստ մը հասանք. ա-  
ւազակներն զմեզ ցամաքը հանե-  
ցին. մարդ գնողներ եկան, աւա-  
զակներն ալ որերնիս ասոր՝ որերնիս  
անոր ծախեցին, ելան գնացին բա-  
ներնին: Աս կրես նէ՝ զարմանալի  
ծերու մը ձեռք ընկայ. ասիկայ հար-  
ցուց ինծի թէ ինչ արհեստ գի-  
տես. պատասխան տուի թէ իմ ար-  
հեստս կարդալ գրել է. աս լսելուն  
պէս սկսաւ չարաչար գանգըտիլ, ու  
ափսոսալ որ ինծի պէս անպիտան՝  
բանի չեկող գերիի մը համար փող  
տուեր է. այնչափ մեղքըցաւ որ քիչ  
մնաց զիսպիտի առնէր՝ ծովը ձգէր ա-  
զատէր: Անչ և իցէ, քիչ մը կանկ առաւ  
մտածեց, դարձաւ ըսաւ ինծի. «Ամ  
,, դժբաղդութենէս է որ ստակս քե-  
,, զի պէս փուճ՝ մարդու մը համար  
,, կորսընցուցի. եղածը եղած է.  
,, նայէ հիմա ինչ կրեսմքեզի, աղէկ  
,, ուշ դիր ու անանկ ըրէ: Աս մէկ ո-  
,, զորմած ու գթասիրտ մարդ մըն եմ.  
,, աս ալ գիտնաս որ աս երկրիս մէջ  
,, տեսակ տեսակ թռչուններ խիստ  
,, շատ կան, ու ես անոնց տարին տաս-  
,, լերկու ամիս ողորմութի կուտամ.  
,, իրենց համար յատուկ պահած մէկ  
,, արտ մը ունիմ, կուզեմ որ կերա-

,, կուրնին անկէ գանեն որչափ որ  
,, կուզեն: Ահա քու ձեռքդ կուտամ  
,, ան արտը. բանեցուր, հերկէ, ցա-  
,, նէ, ինչ գիտես ըրէ, միայն թէ ան  
,, խեղճ թռչուններուն կերակուր  
,, հասցուր: Իսկ հունտ կուզես նէ՝  
,, ահա ցորենոցը կեցած է. գնա որ-  
,, չափ կուզես առ անկէ,»: Աս բա-  
,, նիս վրայ չեմ կրնար պատմել թէ ինչ  
,, պէս սիրտս կոտրեցաւ. «Այնչափ  
,, տարի գրելու կարդալու հետ ըլ-  
,, լամ, ուսում գիտութիւն սորվիմ,  
,, որպէս զի գոնէ մեռնելէս ետե գե-  
,, թեզմանիս վրայ գովասանք մը գը-  
,, ղուի. և հիմա ան խեղճութեանը  
,, հասնիմ որ գետին փորելու հար-  
,, կադրիմ, ան ալ այնպիսի մարդու  
,, մը հրամանով, որ թռչուններուն  
,, կերակուր տալու համար՝ զմարդ  
,, կաշխատցընէ. աս ինչ փորձանք  
,, էր որ գլխուս եկաւ,» կրեսի: Անչ  
,, և իցէ, ՚ի հարկէ ասոր ալ մէկ  
,, վերջը կայ ըսելով՝ հարկաւորը կա-  
,, մաւոր ըրի, և գոհ սրտով ալ չըլ-  
,, լայ նէ՝ յօժարութեամբ սօթտուե-  
,, ցայ ինծի ապսպրուած հրամանը կա-  
,, տարելու: Առաջ աղէկ մը արտը հեր-  
,, կեցի, ու ահօս ահօս բաժնելէս ետե՝  
,, մէկուն մէջ ցորեն ցանեցի, մէկալին  
,, մէջ գարի, հոս կորեկ՝ հոն հաճար,  
,, մէկդին մարացորեն՝ մէկալ գին կտա-  
,, ւատ, տեղ մը ոլու՝ տեղ մըն ալ ին-  
,, չուան անպիտան հունտեր: Այլեցան  
,, հունտերը, մեծցան աճեցան՝ գլուխ  
,, կապեցին. մէյմալ տեսնես՝ հարիւ-  
,, րաւոր թռչուններ ամպի պէս եկան  
,, իջան ուրախանալով. բայց ամէն մէկ  
,, տեսակը իրենց բնութեանը յարմար  
,, եկած հունտերուն վրայ թափեցաւ.  
,, ես ալ նայելէն չէի կշտանար. կը-  
,, զմայլէի թէ ինչպէս ճնձղուկը կորեկ  
,, կուտէր, ու ամենեին հոգը չէր որ  
,, ուրիշը ցորենին վրայ ընկեր է. ա-  
,, մէն թռչուն իրեն սիրած կերակուրը  
,, գտնելէն ետե կըվայելէր, և ուրիշի-  
,, նը ամենեին վար չէր զարնէր: Իրաւ  
,, է որ արտը գեղեցիկ տեսք մը չու-  
,, նէր, և երկրագործութեան արհես-

տովը չէր մշակուած . բայց որովհետեւ  
ան թռչնիկներուն փորը կշտացընե-  
նելու համար խիստ յարմար էր՝ իմ  
ծերուկ տէրս հաւնեցաւ ու գովեց  
զիս . “ Ըստիս ըսաւ , նայէ որ ատ  
” կերպով առաջ տանիս . շատ թըռ-  
” չուն մէկէն կերակրելու համար  
” ատկէ ուրիշ ճամբայ չկայ ” : Ըս  
խօսքին վրայ արթընցայ , ու զարմա-  
ցայ թէ աս երազս որչափ նման է  
իմ օրագիրը շարագրելու վիճակիս :

Տետրակ մը գրուածքէն՝ կարդա-  
ցող մարդն ալ՝ կարդալ չգիտցողն ալ,  
զբաղմունք ունեցողն ալ՝ չունեցողն  
ալ, տանուտէրն ալ՝ տնեցիք ալ, ծերն  
ալ՝ տղան ալ, մեծ ու պզտիկ, էրիկ  
մարդ՝ կնիկ մարդ, ամէնքն ալ բաժին  
պիտի առնեն : Արխնդրեմ՝ որ ամէն  
մարդ ձայնը քաշէ , ու ինքը իր կե-  
րակուրը գտնելէն ետեւ՝ ուրիշի հա-  
մար ցանուած հունտը վար չզարնէ .  
պիտի գիտնայ թէ ասիկայ արտ մըն  
է որ մէջը ամէն բան պիտի ցանուի .  
ինչուան ոլորը և անպիտան կար-  
ծուած հունտերն ալ սիրող թռչուն  
կըգտնուի :

Օ Գ Տ Ա Կ Ա Ր Գ Ի Ի Տ Ե Ր

Փղոսկրը ճերմելցնել :

ԸՄԱՆ Ի մը մէջ այնչափ ջուր դիր որ  
ճերմկընելու կտորուանքդ մէջը կա-  
րենան ծածկուիլ . ան ջրին մէջ ձգէ  
կտոր մը պաղէղ, անանկ որ ջուրը  
ճերմկնայ , յետոյ կրակի վրայ դիր  
ինչուան որ սկսի եռալ . ան ատեն  
փղոսկրի կտորները մէջը ձգէ մէկ  
ժամի չափ , ու երբեմն երբեմն պզտի  
վրձինով շփէ : Երբոր աղէկ մը կը-  
ճերմկին՝ դուրս հանէ ու կտաւի  
մէջ պըլլելով կամ սղոցածքի՝ մէջ թա-  
ղէ որ կամաց կամաց չորնայ ու չճա-  
թըռտի :

1 Թեփերէ Թոլու :

Փղոսկրը աս կերպով ալ կըճերմը-  
կի . սե սապոնը վրան հաւասար տա-  
րածէ ու շփէ . ետքը կրակի բռնէ ու  
ամէն դին հաւասար տաքցուր . երբոր  
սապոնը կըսկսի եռալ, սրբէ ու չոր-  
ցուր փղոսկրը . ասանկով փղոսկրին  
վրայի կարմիր աղտերը կելլեն : Բայց  
թէ որ սապոնը ամէն կողմը հաւա-  
սար չտարածես կամ ամէն դիէն հա-  
ւասար չտաքցընես , փղոսկրը խատու-  
տիկ կըլլայ :



ՍԻՆԵ ԵՐԷՄԻՆ ԿԵՆԵԼՈՒ ԳՆԱՐԻ :

ԵՐԿԸԹԵ կաթսայի մը մէջ դիր  
քիչ մը ջուր . աս կաթսային մէջտե-  
ղը ցցուած ճանկ մը պիտի ըլլայ միս  
կախելու ճանկին նման . ճանկին ծայ-  
րը ծծումբով օծուած պատրոյգ մը  
կապէ , ու պահել ուղած միսդ կաթ-  
սային մէջ դնելէն ետքը ան ծծումբոտ  
պատրոյգը վառէ , կաթսային բերանն  
ալ հողէ խուփով մը ծածկէ , բայց  
անանկ ըլլայ խուփը որ կաթսային  
մէջ մտնէ , ու վարի եզերքը ջրին մէջ  
ծածկուին , որպէս զի վառած պատ-  
րուգիդ ծուխը՝ քի ծծումբային կազը  
դուրս չելլէ : Ըս կերպը հնարողը կը-  
սէ թէ ինքը շատ անգամ ինչուան  
ու թ օր պահած է միսը , ու թարմ  
մսէն ամենեւին տարբերութիւն մը  
չէ ունեցած : Ըս կերպով կրնայ պա-  
հուիլ նաև թարմ արմտիքներն ու  
քաղցուն՝ ինչուան տարի ու կէս :

ԲԱՄՈՅԱԿԱՆ

ՕՏԱՐՆԵՐՈՒ խրատովը կամ չար օրինակովը փ-  
տած մոլու թիւնը շատ աւելի փնաս կընէ և առաջ  
կերթայ ան ազգին մէջ՝ որ գեռ իր առջի անմեղու-  
թիւնը պահած է , քան թէ ան ազգին մէջ որ տր-  
դէն աւրուած է . ինչպէս առողջ մարդն ալ մահոտ  
օգէն կըմեռնի , թէպէտ ան օգին սորվողը անփնս  
կապրի :

ՇԱԲՈՂՐՈՍ

1 Շէր :